

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի, Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միսիայի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».

կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1896 ԹԻԱԿԱՆԻՆ

24-ՐԴ ՏԱՐԻ

24-ՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ԴՐԱՎՈՐՆԵՐՆԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱՎՈՐՆԵՐ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն գիրքով, նոյն պրոգրամայով և նոյն ուղղութիւնով: Մերը ստանում ենք սեփական հեռագիրներով:

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՅՎԱԾԷ

«ՄՇԱԿ» տարեկան գինը թէ՛ Ռուսաստանում և թէ՛ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., հինգ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:

«ՄՇԱԿ» գրվել կարելի է ԽՐԱՎՈՐՆԵՐ (Բաղադրանքային և Բարոնական փողոցների անկիւն): Կայսրութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելու, պէտք է դիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մարմնական պատիժ. Զէյթունի մասին վերջին տեղեկութիւնները. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Զոյալին խնդիրը և մասնագործները. Մատենադարանի խնդիրը. Նախկին Մոսկովայից. Ներքին Լուսին. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Զայոց հարցը և զիջումներ. Նախկին Թիֆլիսից. Նախկին Պարսկաստանից. — ԽՈՒՆ ԼՈՒՐԵՆ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՄԱՐՆԵՐ. Թիֆլիսի ծովափերից:

ՄԱՐՄՆԱԿԱՆ ՊԱՏԻԺ

Նորերս Ռուսաստանի շատ կողմերից զենամտութիւններ, աշխատանքային ժողովները և նոյն իսկ մի քանի զինական ու տեսնական ընկերութիւններ զիջելու կառավարութեան մի միջնորդութեամբ, որին չէ կարելի չը վերաբերվել ամենամեծ համակրութեամբ: Այդ միջնորդութիւնն է վերացնել մարմնական պատիժ կամ բողոքը գործարարութիւնը՝ գիւղական ժողովրդի միջից:

Գուցէ ընթերցողներից շատերը զարմա-

նան լսելով, որ բուն Ռուսաստանում գեղացիութիւնն ունի մարմնական պատիժ և գիւղական ժողովուրդը դեռ եղբարկվում է բողոքի ստորացնող նախադիմումներին, մինչդեռ Կովկասի գիւղական ազգաբնակչութիւնը օրէնքով ազատ է զրանից և չէ ենթարկվում այդ տեսակ ստորացնող պատիժին:

Սակայն պէտք է խմանալ, որ բուն Ռուսաստանում գիւղական ժողովուրդը եւնթարկված է մի քանի բաղադրիկ պայմաններին: Երբ 1861 թվ. փետրվարի 19-ի մեծ ընթերցումը վերջ գրեց ձորագործների ժողովրդեան Ռուսաստանում, օրէնքը հնարաւոր չը համարեց ազատված գիւղական ժողովուրդը հաւասարեցնել միւս դասակարգերին հետ՝ դատաստանի և վարչութեան վերաբերմամբ: Կազմվեց մի առանձին գիւղական դասակարգային տեղական վարչութիւն և գիւղական դասակարգային դատարան կամ վոյստոյ դատարան, գիւղացիների մէջ տեղի ունեցող անկարգութիւնները քաղաքացիական և քրեական դործերը դատուելու համար:

Այդպիսով հարկաւոր համարելով գիւ-

ղական ժողովուրդը հանել ընդհանուր օրէնագրութեան ազդեցութիւնից և ստեղծել նրա համար առանձին գիւղական դասակարգային դատարան, հարկաւոր համարվեց նաև պահպանել նրա վերաբերմամբ մարմնական պատիժը, որից ուրիշ դատակարգներ արդէն ազատվել էին: Ընթերցումը հեղինակները վաղաժամ նկատեցին ազատել մարմնական պատիժ այն դասակարգը, որի վարք ու բարքը սաստիկ կոպտացել էր և որի մէջ, դարեւոր ձորագործների շնորհիւ, մեռել էր սեփական արժանապատուութեան զգացումը: Երկու-եւէն կրում, թէ անհիմն կերպով, որ պատուի, մարդկային արժանապատուութեան զգացումից զուրկ ժողովուրդը յանկարծ ազատ զգալով իրան որ և է խնամակարութիւնից և ճշունից, բոլորովին կանքաբոյականանայ կամ, ինչպէս ասում են՝ «կապը կը կտրէ»:

Սակայն այդ օրից անցել է ամբողջ 35 տարի, պայմանները, կեանքը միանգամայն փոխվել են, և այժմ Ռուսաստանի զանազան ծայրերից և անկիւններից լսվող ձայները միաբերան վկայում են, որ հասել է ժամանակը ազատել տասնեակ միլիոնաւոր գիւղացիների այնպիսի ստորացնող պատիժից, ինչպիսին է բողոքը: Ռուս հասարակութեան և մամուլի լաւագոյն և ազատամիտ մասը ուրախութեամբ ողջունեց զենամտութիւնը, ազնուականութեան և դիտանական հաստատութիւնների այդ քայլը, և ոչ միայն ազատամիտ բանակը, այլ և նոյն իսկ այնպիսի պահպանողական օրգաններ, ինչպէս «Свѣтъ», «Церковный Вѣстникъ», «Новое Время» սկսեցին ուղղակի յայտնել, թէ մարմնական պատիժը այժմ ամօթ է բերում ուսուսնուն և քաղաքակրթութեան գործին:

Կարծում ենք, որ առանձին փաստաբանութեան պէտք չը կայ ապացուցանելու, որ մարմնական պատիժը վերացնելու միջնորդութիւնը մի բոլորովին արդարացի, հասկանալի և տարրական բարոյականութեան ու մարդասիրութեան վրա հիմն-

ված գործ է, մանաւանդ որ վիճակագրական անհերքելի փաստերը ապացուցանում են, որ մարմնական պատիժները խտացնում, կոպտացնում են մարդուն և բոլորովին ուրիշ հետեւանքին են հասցնում, քան այն, ինչ որ սպասում են մարմնական պատիժի կողմնակիցները:

Տարաբաղաբար, մի այդպիսի ամենապարզ մարդասիրական և քրիստոնէական գործ դարձեալ գրեթե ուսուս խաւարամիտ և յետադէմ մամուլի մի քանի օրգաններին, որոնք սկսեցին սարսափելի կերպով յարձակվել այդ հարցը յարուցանող հաստատութիւնների վրա, առաքելով, որ այդ միջնորդութիւնը համաձայն չէ կառավարութեան և օրինապահութեան շահերի հետ:

Տարակցս չը կայ, որ այդ տխուր աղաղակները կը մնան «ձայն բարբառոյ յանապատի» վաղուց հասել է ժամանակը, որ օրէնքը վերացնի մի այնպիսի ամօթալի, միջնադարեան կարգ, ինչպիսին է մարմնական պատիժը:

ԶԵՅԹՈՒՆԻ ՄԱՍԻՆ ՎԵՐԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Daily News» լրագիրը հետեւեալ հեռագիրն է ստացել Զէյթունից, դեկտեմբերի 2/14-ից.

«Մուսաֆա-Զէյի փաշան նշանակվելով զօրքի գլխաւոր հրամանատար, ժողովելով Կրէտէ կղզու զօրախումբը, տասն օր առաջ, քսան թնդանօթներով և պատերազմական միջոցների մեծ պաշարով Ալեքսանդրէից գնաց դէպի Մարաշ: Զորս օր առաջ նա դուրս եկաւ Մարաշից 12,000 զինուորականով, որոնցից միայն 1000 հոգի կանոնաւոր զօրք է, մնացածը բաղկացած է բէդիֆներից. նա կանգ առաւ Զէյթունից 4 ժամ հեռավորութեան վրա: Յետոյ նա տեղեկացրեց կառավարութեան, թէ Զէյթունը առնելու համար պէտք է 50,000 կանոնաւոր զօրք և 50 թնդանօթ ունենայ: Նա յայտնեց մի և նոյն ժամանակ, որ բէդիֆներին հագուստ տրվի, որովհետև նրանք բոլորովին մեղք են, նոյն իսկ չապիկ և վարտիք չունեն:

Թրքականից և նրա հետ ոչ մի առնչութիւն չունեցող: Կ. Պոլսում կան բացի պետականից՝ անգլիական, աւստրիական, գերմանական, իտալական, ռուսական և ֆրանսիական թղթատարութիւններ, իւրաքանչիւր իր դեսպանատան հովանաւորութեան ներքեւ, որոնք իսկապէս միայն իրանց հպատակների թղթակցութիւններին և առևտրական յարաբերութիւններին պէտք է ծառայեն, բայց ազատ են ընդունել նաև ուրիշներից ամեն կերպ յանձնարարութիւն: Եւ իրօք, այսօր այդ եւրօպական թղթատարութիւններն աւելի գործ ունեն, աւելի բանուկ են, և մանաւանդ այնքան աւելի վստահելի ու սուղանով են, որ նոյն իսկ օսմանեան հպատակներն աւելի նրանց են դիմում, քան թէ պետականից թիւրքական զանաւարտը այս կողմից եկամուտի անաղին կորուստ ունի, որովհետև այս օտար թղթատարութիւնները օսմանեան նամակադրույժ չեն գործածում, այլ իւրաքանչիւր իր սեփական նը, ուստի կառավարութիւնը շատ աշխատեց, որ գոնէ այս եկամուտից չը զրկվի: Յատուկ մի յանձնաժողով, Տառեան Արթին-փաշայի նախագահութեան ներքեւ, երկարօրէն բանակցեց դեսպանատների հետ, բայց ոչ մի նպատաւոր հետեւանք չը հասաւ: Եւրօպացիք տեղի չը տուին: Վերև յիշված եւրօպական թղթատարութիւնները ոչ թէ միայն անկախօրէն ընդունում են ամեն յանձնարարութիւններ, այլ և իրանց միջոցով ստացված նամակները, լրագիրները և այլն՝ իրանք են ցրվում քաղաքում, իրանց սեփական ցրուիչների ձեռքով:

Եւ օրպէս զի ընթերցողը զազախար ունենայ

ԲԱՆԱՄԱՐՆԵՐ

ԹԻՒՐԿԻԱՅԻ ՄՈՎԱԶԵՐՔԻՆ

XI

Կ. ՊՈԼՍՈՒՄ

Թիւրքիայում ապրող օտարահպատակները թիւրքական օրէնքին չեն ենթարկվում: Օտարահպատակների մասին եղած կարգադրութիւնները, որոնք սահմանված են capitulation կոչված դաշնագրութեան հիման վրա, միշտ ճշնել են թիւրք կառավարութիւնը, որ ամեն առիթով աշխատել է որքան կարելի է սահմանափակել օտարների այս անկախութիւնն իր երկրում:

Ինչպէս յայտնի է, Եկապիտիւլաթիոնի տրամադրութեան համաձայն, ոչ-օսմանեան հպատակները թէ՛ ընտելվում են թիւրքիայում, բայց այս վերջինի օրէնքներից անկախ, ենթարկվում են դարձեալ իւրաքանչիւր իրանց երկրի օրէնքին և ազատ են թիւրք իշխանութիւններից: Թէ Եւրօպայ, թէ Ամերիկա և թէ Պարսկաստան, չը նայելով օսմանեան կառավարութեան անընդհատ ջանքերին, երբեք չեն համաձայնվել զիջանել որ և է կէտ այս դաշնագրութիւնից, և չը վստահելով թիւրքական օրէնքների և թիւրքիայում իշխող կարգերին, երբեք իրանց հպատակներին չեն ենթարկել նրանց: Այս հանգամանքը այնպիսի առաւելութիւններ է տալիս օտարահպատակներին, որ օսմանց իրանք, մանաւանդ քրիստոնէայ րայեան երբ, ամեն միջոց գործ են

դնում, որ այս կամ այն կերպով կարողանան օսմանցիւթիւնը թողնել և մի ուրիշ տէրութեան հպատակ լինել:

Յիշենք այդ առաւելութիւններից մի քանիսը: Ոչ մի թիւրք պաշտօնեայ կամ ոստիկան իրաւունք չունի օտարահպատակին ձեռքաւորել, կամ նոյն իսկ նրա ընտանքանը մանել, այլ պէտք է կանխապէս իմաց տալ նրա դեսպանատանը կամ հիւպատոսարանին և այս վերջինը՝ եթէ հարկաւոր համարի, ինքն յատուկ մարդ կուղարկէ և նրան կը պահէ հիւպատոսարանում: Եւ եթէ թիւրք իշխանութիւնը, իբր թէ չը ճանաչելով, օտարահպատակին կարանուորէ առանց հիւպատոսարանի գիտութեան, նա պարտաւոր իսկայն յանձնել հիւպատոսարանին, երբ օսմանայ և պահանջէ: Միայն թէ օսմանեան կառավարութիւնը՝ միշտ իրաւունք ունի պահանջել, որ իր յանցաւոր համարած օտարահպատակը դադարի իր ճողումը բնակվելուց և դուրս գալ իր սահմաններից: Երբ օտարահպատակները դատ ունենան միմեանց մէջ, ոչ թէ թիւրք դատարաններին պէտք է դիմեն, այլ իրանց հիւպատոսարանին, ուր այս նպատակին համար յատուկ դատարան կայ, հիւպատոսի նախագահութեան ներքեւ: Իսկ եթէ մի կողմը թիւրքահպատակ է, զիմում են օսմանեան դատարանին, բայց օտարահպատակի դատը այն ժամանակ միայն կարող է քննվել այգեղ, երբ իր հիւպատոսարանից մի պաշտօնեայ, սովորաբար թարգմանը, ներկայ է դատավարութեան:

Առեւտրական դատարաններում օտարահպատակներն ունեն իրանց ներկայացուցիչ դատա-

ւորների չարքում, որ այնտեղ դրված է դեսպանատնից և առանց որի, և նաև հիւպատոսարանի թարգմանի, օտար հպատակի դատը չէ կարող քննվել: Այս վերջին հանգամանքը չափազանց երկարացնում է օտարահպատակի դատի քննութիւնը, որովհետև դրա համար որոշված է 15 օրը մի անգամ, և եթէ այդ օրը կամ օտար դատաւորը կամ թարգմանը որ և է պատճառով չը կարողանան գալ, դատը կը յետաձգվի: Եւ գիտեմ դատեր, և այն էլ շատ պարզ, շատ զիւրաւմեղ, որոնք ամբողջ տարիներ են տեղ և դեռ չեն վերջանում: Բայց անվերջ յետաձգումները շատ են պատահում, մանաւանդ այն ժամանակ, երբ օտարահպատակի պահանջը օրինաւոր է և մանաւանդ տուժելի կողմը որ և է կառավարչական հաստատութիւնն է: Գատարանը ամեն փոքր առիթից օգտու կը քաղէ չարքում յետաձգելու, որպէս զի որքան կարելի է ուշ արձակէ իր համար անախօրժ, այդ անպատվելի: Իսկ այդպիսի առիթներ երբեք պակաս չեն թիւրքիայի դատաւորների համար:

Եկապիտիւլաթիոնի գլխաւոր հիմքերից մէկն էլ օտար թղթատարութիւնների ներկայութիւնն է թիւրքիայում: Միայն օսմանեան օրէնքների և ոստիկանական կամ այլ վարչական կարգերի վրա չէ, որ եւրօպական պետութիւնները վստահութիւն չունեն, և իրանց հպատակներին դրանց չեն ենթարկում, այլ նոյնպէս անվստահ են նաև օսմանեան թղթատարութեան վրա: Այսօր թէ Կ. Պոլսում և թէ թիւրքիայի բոլոր քաղաքներում, ուր կայ օտար հիւպատոսութիւն, կայ նաև օտար թղթատարութիւն, բոլորովին անկախ

Փաշան յայտնում է նոյնպէս, որ զօրքը միայն մի օրովայ համար հայ ունի և ուսուցիչը չը կայ:

«Տեղական իշխանութիւնները 20,000 լիւրայի փոխառութիւն են արել, բայց դրա կէսը բաժանվել է սպաներին, իսկ միւս կէսը հազիւ մի շարքով բաժնի: Բեզիֆներին Մուստաֆա Զէքի փաշան զինաւորեց Հալէպի միջերանցից, բայց զէնքերի մեծ մասը փախած դուրս եկաւ: Նրա զինուորիկները հետեանքն այն եղաւ, որ վեց բաժնի իսկ ուղարկվեց Ալաշկերտի Զէյթուն, Սիւրի ճանապարհով, նոյնպէս ուղարկվեց համիլիէ հեծելազօրքի մի խումբ:

«Զէյթունի զինաւորված բնակիչները թիւը 26,000 է: Մի նոր զինուորացիի համաձայն, Մարաշի իշխանութիւնը մտադիր է պատգամաւորութիւն ուղարկել Զէյթուն, բաղկացած 20 նշանաւոր հայերից, տեղական կղերի հետ միասին, որպէս զի կարգադրեն հաշտութեան պայմանները: Մի ուրիշ տեղեկութիւն հաստատում է, որ Ալաշկերտի կառավարիչը յայտնել է Բ. Գրան, թէ 5—6000 հայեր բռնել են սարերը այդ քաղաքի շրջակայքում և Մարսուսի ճանապարհի վրա 6000 մարդկանցից աւելի կան: Անտիօքի քայմազա՛մը հեռագրել է, թէ 5000 լաւ զինաւորված հայեր իջել են ամիւր Բէստըրի և Սիւլիզիայի մօտ: Այդ կողմի թիւքը գիւղերը միաբանվել են հայերի հետ և յայտնել են, թէ իրանք ևս ուղում են ազատ լինել:»

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՆԴԻՐԸ ԵՒ ՄԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ

Յայտնի է, որ երբ հողի քանակութիւնը պակասում է և հողաբաժինները փոքրանում են, երկրագործ Ժողովրդի բարեկեցութիւնը սկսում է ընկնել և Ժողովրդի աճումը թուլանում է: Բայց բոլորովին պարզված չէ, թէ աճման այդ թուլանալը ինչ հանգամանքից աւելի կախում ունի. այն բանից, որ մարդիկ քիչ են ծնունդ, թէ այն բանից, որ մարդիկ չափ են մեռնում:

Նորեքն հրատարակվել է մի վիճակագրական հետազոտութիւն, որ բաւական լայն է սփռում այդ հարցի վրա և սարգում է հողի քանակութեան ազդեցութիւնը մահացութեան վրա: Վօրօնէմի նահանգի երեք գաւառների վերջին տասնամեակի վիճակագրական թիւերը հետեւեալ աւտիճաններն են դնում մեր առաջ: Հազար հողուց մեռել են՝

Անհոջներէից	45,6	անձն
Սակաւահողերից	39,7	»
Միջակներէից	32,7	»
Բազմահողերից	24,4	»

Թէ քին հայեացք ունի թիւքը կառավարութիւնը թղթատարութեան կամ Ժողովրդի միմեանց մէջ արագ հաղորդակցութեան վրա, և ինչ կարգադրութիւններ է անում այս մասին, ևս աւելորդ չեմ համարում մանրամասնօրէն կանգ առնել այս կէտի վրա: Մի օր ինձ հարկաւոր եղաւ մի կարեւոր տոմսակ ուղարկել Կ. Պոլսի մի հեռաւոր թաղում գտնվող պարոնին. տոմսակը գրեցի, ծրարեցի, հասցէն գրեցի թիւքերէն և տուի ծառային, որ տանի քաղաքային թղթատարի արկը գցի: Մտանքը դարմանքով երեսոս նայեց. «Պարոն, մենք քաղաքային պօստ չունենք: Այս պատասխանի վրա չը գիտեմ որի դարմանքն աւելի էր, իմա, թէ ծառայինը: Գոյուք սխալվում էր, ասում եմ ծառային, ևս շատ լաւ յիշում եմ, որ այստեղ poste locale (տեղական, քաղաքային պօստ) կար. միթէ այժմ վերցված է:» Հարց ու փորձ արի և իմացայ, որ իր օք չը կար: Ինչ անէի. հեռագիր չէի կարող խիել, որովհետեւ շատ ծախս կը պահանջէր գործի էութիւնը նրան մանրամասն հետեցանքնու համար. բայց դրանից հարկաւոր էր մի ուրիշ թուղթ էլ ուղարկել նրան, որ պէտք է իմ սոսմ ապրիս մէջ ներփակելի: Ուրիշ ճար չը կար. յատուկ սուրհանդակ վարձեցի և նրան յանձնեցի նամակս, և որովհետեւ Բօսֆօրի այն թաղից, որ տեղ գտնվում էր այդ պարոնը, երեկոյեան, արեգակի մուտքից յետոյ երթեկեկութիւնը դադարում է, էլ Բօսֆօրի փոքրիկ չողկնաւան այնտեղ չէ հանդիպում, ուստի իմ սուրհանդակը ստիպված էր այն գիւղերը մնալ այդ թաղում և հետեւալ օրը կէս օրին մօտ միայն դառնալ ինձ մօտ և պատասխան բերել: Այս կերպով գրեթէ 24 ժամ

Ուրեմն դուրս է գալիս, որ մեծ հողաբաժիններ ունեցողները հետ համեմատած՝ անհոջները մօտ երկու անգամ աւելի են մեռնում: Նահանգի միւս հինգ գաւառների ընդհանուր թիւքը տալիս են դարձեալ նոյնամասն պատկեր. բազմահողերից մեռնում են 21,7, անհոջներից 41,2, հաշվելով հազար հողու վրա:

Հետազոտող Օրբոսով յայտնում է, որ հողի սակաւութեան հետ կապված են զանազան հիւսնադրութիւններ և ֆիզիքական պակասութիւններ: Օրբոսով, անհոջների զաւակարգում 10,000 հողում մէջ պատահում են միջին թիւով 373 կար, սակաւահողերի մէջ 163, իսկ հարուստների մէջ միայն 90 անձ:

Գիւղական դատակարգի նիւթական ապահովութեան խնդիրը այդպիսով հիմնական խնդիր է, որ ազդում է և առողջութեան և ամբողջ տնտեսութեան վրա: Եթէ փոքր ինչ աւելի լայն նայենք հարցի վրա, կը տեսնենք, որ այդ խնդիրը էական ազդեցութիւն ունի և Ժողովրդական կրթութեան ու բարոյականութեան վրա: Ով սիրում է Ժողովուրդը և գնահատում է նրա ֆիզիքական և մտաւոր բարօրութիւնը, պէտք է ամեն ջանք գործ դնի նրան ապահովել աղքատութեան և զրկանքների ճիւղանքներից, որոնք բացում են կորուստի անյատակ անդունդ:

ՄԱՏՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Ն ու ա գ և Մ ե ո ղ ե ի», Լեռնացի: 1895, Լճիկում.

Ինչ ենք պահանջում մի բանաստեղծից: Ամենից առաջ, ի հարկէ, տաղանդ: Բէլինսկին անիծելով անիծում էր այն մարդկանց, որոնք, չունենալով բնատուր չորհրդ, սկսում են ոտանաւորներ շինել: Տաղանդը միայն կարող է հրաշակեցուցի: Նա բաց կանէ լեզուի կապերը և խօսքը, սրտաբուլի, ուժեղ խօսքը դուրս կը հասնէ վճիտ աղբիւրի նման, հնչուն, կոկ և ուղուն: Լեզուն—դա ամեն մի արտայայտվող մտքի կերպարանն է: Եւ իրար են կարծում շատերը, թէ մի գրական լեզու պիտի նախ զարգանայ, չըբզանայ և ապա կարողանայ բանաստեղծի մտքերը արտայայտել: Եթէ լեզուն անմշակ է, բայց զուրկ չէ կենդանի, ձկուն հիւթերից, նա անտաճաւ կը ձուլանայ տաղանդների աշխատանքներով: Այդ մենք տեսնում ենք ուրիշ աղբիւրի գրականութեան պատմութեան մէջ: Եւ նոյն օրէնքը մեզ ևս անպայմ չէ:

Եթէ Բաֆֆին լինէր մի սովորական գրող, նա միանգամայն կընկնէր լեզուի աղքատութիւնից և նրա գրութիւնները կը կրէին նոյն տափակ, աղբիւր կարողութիւնից զուրկ ոճը, որ քոյութիւն

յետոյ միայն ևս պատասխան ստացայ և այդ նախնի համար փոխանակ 2 կոպէկի՝ ծախսեցի մօտ 2 բութլի:

Հիմա մտածում եմ, Կ. Պոլսի նման մի քաղաքում, որ ահագին ընդարձակութեամբ տարածված է Բօսֆօրի եզերքի վրա, որի մի ծայրից մինչև միւս ծայրը, այսինքն Բօսֆօրի մատերից, որի մօտերը գետնաբանների ամարանոցներն են հաստատված (Բէօյիւլ-դէրէ, Թաւալիա) և աւելի էլ վեր, ուր գործարաններ, պահեստի տեղեր և վերջերս հոծ բնակչութիւն կայ (Կալաթ, Բէջքօ, Սարիհար) մինչև Մարմարա ծովը, իշխանաց կղզիները, ուր նոյնպէս շատ մեծ բազմութիւն է լինում մանաւանդ ամառները,—այս մեծ տարածութեան համար, որ չորհեւաւոր ամբողջ հինգ ժամից պակաս չէ տևում, քաղաքային թղթատար չը կայ և ամեն մարդ հարկադրված է լինում յատուկ սուրհանդակի ձեռքով ուղարկել իր նամակները: Լաւ է, եթէ երթեկեկող չողկնաւորի մէջ ծանօթ մարդ ունենա, կամ կարողանա հասցնել չողկնաւոր, եթէ ոչ անհրաժեշտ է լինում առանձին մարդ ունենալ դրա համար: Եւ իրօք էլ Կ. Պոլսի առեւտրական աները և նոյն իսկ շատ զերգաստաններ, միմիայն այդ պէտքի համար ստիպված են պահել մէկի տեղ երկու ծառայ, մէկ գործակատարի տեղ երկուսը: Եւ քաղաքային թղթատարը Կ. Պոլսում վերացվել է սրանից 7—8 տարի առաջ, որպէս զի պոլսեցիք առ ի թ չ ունենան միմեանց հետ ոգիւր ու թիւր և մի թղթակցի կարող են դաւել նիւթի տեղական իշխանութեան դէմ կամ բարեխնամ կառավարութեան

ունէր հայ գրականութեան մէջ: Բայց նրա տաղանդը ոչ միայն պատկերներ, հասկացողութիւնների բոլորովին նոր աշխարհ բացեց, այլ և կարողացաւ գտնել արտայայտելու միջոցը, նա համարեալ ստեղծեց վիպական մի նոր լեզու: Այդպէս և ստանաւոր բանաստեղծութիւնը: Շատ անգամ լսում էք զանգամանք, թէ մեր նոր աշխարհիկ լեզուն չունի կարճ ու ազդու դարձածներ, թէ նա չէ կարողանում արտայայտել մտքի բոլոր նրբութիւնները: Ոչինչ չենք ուզում ասել դրա դէմ, բայց արդարացինը դրանով ամեն մի խաղութիւն, մենք երբէք չենք կարող քանի որ հաւատում ենք, որ տաղանդը հարթեցնում է ամեն խորը ու բոլոր, ամեն մի խօջանդու և կարողանում է նոյն իսկ աղքատ լեզուին հաղորդել գեղեցիկ ձևեր: Ուստի բանաստեղծ Կոյսովը սովորել էր մի հասարակ գրադրութիւն միայն, բայց նրա խոչոր տաղանդը որպիսի քաղցրութիւն է հաղորդել նրա պոէզիային: Մի ուրիշ բանաստեղծ, Նեկրասով, Ժողովրդական վիշտն ու ցաւը մարմնացրեց հիւսնայի երգերի մէջ, չը դիմելով բարձրաթիւի, ճոճան ոճերին և դարձեալ զանգամանք: Նա երգեց հասարակ, նոյն իսկ կոպիտ լեզուով, բայց տաղանդը զարդարեց նրան մի թովիչ ինքնուրոյնութեամբ, որ իր նմանը չունի ուստի գրականութեան մէջ:

Այս փոքրիկ նախաբանը հարկաւոր էր մեզ՝ բացատրելու համար, որ եթէ իւրաքանչիւր բանաստեղծութեան գլխաւոր արժանիքը տաղանդն է, ապա ուրեմն լեզուն ու ոճը պիտի լինեն գեղեցիկ, բնական, չը պիտի կրեն բռնութեան, կարկատանի, յերկրման կերպարանք:

Պ. Լեռնացի նոր չէ սկսել բանաստեղծութիւններ գրել: Խոստովանում ենք,—մի բան, որ հաստատում է, թէ նա իբրեւ բանաստեղծ շատ աջողութիւն չը պիտի ունենայ, այդ այն կոպտութիւնն է, որով նա վարվում է լեզուի հետ: Մի միտք արտայայտելու համար չէ կարելի հարստահարել լեզուն, անբնական գործադրութիւն տալ նրան: Իսկ Լեռնացի այս հանգամանքում շատ է սիրում բանաստեղծի ազատութիւնը ի չարք գործ ածել: Երբ գրում և տալիս են մեր ձեռքը այսպիսի բաներ՝

- «Թեքերի վրա դեփիւր» (11)
- «Ժամերին մընայլ յուսահատութեան» (22)
- «Միշտիւր զին է մէջս իմ սրտիս» (33)
- «Կը թռնեք դադարէ մարդկային լեռի» (46)
- «Կա՛ պատկերներ սիրոյս է թաղուհին» (55)

մենք երբէք չենք հաւատում և իրաւունք էլ չունենք հաւատալու, որ այդ անձոնութիւնները թղթի վրա գրուով են յանուն մի այլ ձաշակի, մի այլ յարմարութեան, ոչ թէ պարզապէս ունենք դրսեւորու համար: Իսկ երբ ունենք

թեքերի վրա մեծ պաշտօնեաներին անհանդիմանալի ուղղել, առանց երևան գալու... Պէտք է խոստովանել, որ սովորաբար կառավարութիւնը շատ խելօք, արմատական միջոցի է դիմել: Որպէս զի իր հպատակները թղթատարի միջոցով զեղծում չը գործեն մայրաքաղաքում, ուղղակի ջնջել է թղթատարը և վերջացաւ: Եւ դեռ ասողներ կան՝ թէ այնտեղ արմատական կարգադրութիւններ չէ կարելի մտցնել:

Այս փաստից յետոյ, յոյս ունեւ ընթերցողը չի հարցնի, թէ արդեօք տէլէֆօն կայ Կ. Պոլսում թէ ոչ: Ի հարկէ ոչ, կը պատասխանեմ կասկածողներին: Ինչպէս կարելի է թոյլ տալ, որ մարդիկ կարողանան հեռաւոր տեղերից, մի թաղից միւս թաղը, մի փողոցից միւս փողոցը, մի տնից միւս տունը զիւրութիւն ունենալ միմեանց հետ խօսելու, այն էլ առանց որոշ հսկողութեան ենթարկված լինելու: Որք հոգն է թէ ժամանակ կը կորչի, եթէ միմեանց մօտ գնան կամ նամակով հաղորդեն իրանց միտքը: Time is money—Ժամանակը փող արժէ՝ թիւրքաց համար չէ ասված և կարծեմ շատ էլ չեմ սխալվի, եթէ պնդեմ, թէ ոչ մի թուրք իր ամբողջ կենանքում այդ սկզբունքին հետեւած չէ և ոչ էլ այդ ստացուածը զիտէ. նրանց ամենաազդեղծաբան բառը, սկսած պաշտօնաբաններից մինչև հասարակ բանաւորը, մի ուրիշ առած է, որ լաւ գիտեն և շատ էլ լաւ կատարում են, այն է՝ հետախնայութիւն: Եւ ինքն շատ անգամ լսել են թիւրք պաշտօնեաներից կամ հասարակ անձերից՝ «աճէ՛նքիդ, նէ, էֆէ՛նքիդ, ետվա՛, ետվա՛» (ինչ էք շտապում, պարոն, կամաց, կամաց: Եւ այդ հետախնայութիւնը չի չորջիւն են դառնում բոլոր եղած և լինելիք

դրստելու նպատակով բանաստեղծը սկսում է տանջել թէ իրան և թէ ինքն լեզուն—ջուրը եկել է ու տարել պղպիսի բանաստեղծին: Ոտներ դրսեւոր մի այլ քրտնաթոր քանքը տեսնում ենք մանաւանդ 76 երեսի վրա, ուր կայ «Երակայութեան» բառը: Կրճատումներ բանաստեղծութիւնների մէջ թղթատրվում են, բայց չենք տեսել, որ կրճատվի ձայնաւորը բառի մէջ: Եւ այդպիսի կրճատումներ Լեռնացի թոյլ է տուել իր միւս բանաստեղծութիւնների մէջ միանգամայն աններելի չափով:

Գալով ոտանաւորների բովանդակութեան, պիտի ասենք, որ Լեռնացի շատ տեղերում խոր մըտածող բանաստեղծ է: Զգացմունք գտնում ենք շատ տեղերում, մանաւանդ այն ոտանաւորների մէջ, որոնք սիրային չեն: Սիրոյ երգը Լեռնացի գրչի տակից չէ հնչում, այլ սովորական աղմուկն ենք և հանում: Ինքնուրոյնութիւն, մտքի խորութիւն չենք գտնում այդտեղ: Ընդհակառակը, աղբու են և աղբուկած այն երգերը, որոնք մարդկային ցաւն են նկարագրում, դադարաւական մարտն են դրուստում: Մենք հաճութեամբ կարդացինք «Ե՛կ, ես քեզ տանեմ սիրած երկիրներ», «Օ՛, առէ՛ք թիւեր, ես վեր թռչնեմ», «Լուսաղէմը դեռ չէր վառվել», «Երեխան հիւսնադ էր», «Երկնքում ամպերի թանձր բազմութիւն» ոտանաւորները, դրանց մէջ չը կան կամ շատ անշնչան են բռնադրօնիկ ոճեր—մի հանգամանք, որ վկայում է թէ զգացմունքով են գրված:

Ամփոփելով մեր խօսքը, կասենք որ իւրաքանչիւր հեղինակ խոստանալ պիտի լինի զէպի իր սեփական գործը: Պէտք է ընտրել, գտնել, և եթէ մի բան աջողված չէ, չը պէտք է նրան լոյս հանել, լաւ իմանալով որ ընթերցողը ոչինչ չի կորցնի, եթէ նրա համար անպայման յնայ չաջողված, իսկ գրութեանը: Եթէ Լեռնացի հետեւէր այս հասարակ ճշմարտութեան, ինչ կը լինէր—Այն, որ «Նուադ և Մեղեղի» գրքից աւելի նիհար կը լինէր, ոտանաւորների թիւը չէր հասնի 52-ի, բայց այդ ամենի փոխարէն նա կը դառնար մի լաւ բան, որ շտապով գրված, թեքերի չը սրբաբանած հեղինակութեան տպաւորութիւնը չէր թողնի: Ինչու կարծել թէ բանաստեղծը պէտք է շատ թուով ոտանաւորներ արտադրէ: Ս. Շահալիզեանի համար բաւական է «Լեռնի վիշտը»: Գրողը չը պիտի թիւէ, այլ պիտի ստեղծագործէ: Խոստովանեցեք, պ. Լեռնաց, որ թխածի հոտ է գալիս ձեռն այսպիսի տողերից.

«Թախանցիկ, որպէս նուրը անուրջ կոյսի, «Չընայ մարմնացումն ստիպի երգի» (42).

կամ
«Եւ անդօր սրունքով հասաւ գետակին,

կարգադրութիւնները: Առածի կարգն անցած արեւելեան դաճարութեան և ծուլութեան յատկութիւնը ամենապարզաւ կերպով փայլում է՝ մանաւանդ թիւքը տարրի վրա:

Բայց Կ. Պոլսում միայն թիւքերը չեն բնակվում. բնակաւոր հայեր, յոյներ և եւրօպացիք կան, որոնց՝ մանաւանդ առեւտրականների և բանկաների համար տէլէֆօնի գործածութիւնը անշուշտ անհրաժեշտ պէտք է նկատվէր: Եւ դարմանալի էլ կը լինէր այլապէս: Ուստի շատերը փորձեցին: Բայց որպէս զի միանգամ ընդ միշտ հասկացվի բուն իրողութիւնը, պարզապէս ասենք թէ՛ կառավարութիւնը արգելեց տէլէֆօնի գործածութիւնը, քաղաքական նպատակով, ինչպէս որ վերացրեց քաղաքային թղթատարը: Եւ որովհետեւ թիւքերը սովոր են դանդաղութեան, պահանջ չեն դրում արագօրէն գործելու, ուստի արգելքի բովանդակ նշանակութիւնը ծանրանում է քրիստոնեաների՝ եւրօպացիների, հայերի և յոյների վրա, որոնք այս քաղաքական միջոցի՝ առաջ ստիպված են խոստովանել և լռել: Ինձ պատմեցին Կ. Պոլսում, թէ օսմանեան պետական բանկը, որի կենտրոնը Ղալաթիայումն է, փորձել է տէլէֆօնի հաղորդակցութիւն պահպանել իր՝ Ստամբուլի և Պերայի բաժինների հետ, բայց նըբան էլ արգելել են:

Բայց կայ մի տեղ, մի դիժ, ուր տէլէֆօնը անհրաժեշտ է նկատված: Այդ դիժը կապում է ծովային միլիտարութիւնը Բօսֆօրի մօտը ամբողջութիւնների հետ, Սե ծովի կողմից... Այնտեղ, ինչպէս երեւում է, արագ յարաբերութեան առանձնապէս պէտք է զգացվում...

Ավանտես

«Ուր արծաթ ձայնով ջուրն էր հանում վէճ».
կամ
«Հնչում էր ձայնը սիրազին»
«Թոթոռուն մտքերը թռչում էր»
«Եկին թռչումն խոսքերում» (63).
Դէն գեղեցիկ այդ բառախաղերը...

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՅ

Դեկտեմբերի 4-ին

Աստղաբանների վաճառական Ս. Ուզլեան, կարողացավ «Մշակի» մէջ Մոսկովայից գրած թղթակցութիւնները հայ ուսանողների նիւթական ներդրութեան մասին, նուիրել է այստեղի ուսանողներին 600 ռուբլի: Ի հարկէ, պարտնէ այդ նուիրատուութիւնը աւելի քան գովելի է և յոյս ենք տածում, որ հայերի մէջ կը գտնուին անձինք, որոնք կը հետեան այդ օրինակին և առանց օգնութեան չեն թողնի իրանց երիտասարդութեան լաւագոյն մասը:

Այժմ այստեղ են գտնուում երկու երգիչներ՝ պ. Նարբիս (Нарбис) Դաւանան և պ. Ամիրջան: Անշուշտ զրանք մեր հայ երգիչներն են՝ Ներսէս Դաւանան և Բ. Ամիրջան: Սակայն մի ինչ որ անհասկանալի նպատակով թիֆլիսի Ամիրջանները Մոսկովայում Ամիրջան է դարձել, իսկ թիֆլիսում Ներսէս անուն կրողը այստեղ Нарбис, Шахлманиս է դարձել (ինչու ոչ՞ Դաւանան մի նիւ. այդ ազգը Նարբիս անունաւոր շատ լաւ կը սաղէր): Կրել հայաբնակ քաղաքում հայի անուն, իսկ օտար քաղաքում իր անունը փոխել,—այդ փաստը այնքան էլ լաւ մտքեր չէ առաջ բերում մարդու մէջ: Ձը լինի թէ այդ օրինակը մեր երգիչները առել են այն տխրահռչակ Աբգարից, որը գտնուում խաղիս, իր անունը Ա. Գեղի օ էր չինել:

Այդպիսի օրինակները հայերի մէջ երեւի էլի կը գտնուին:

ՆԵՐՍԷՍԻՆ ԼՈՒՐԵՐ

Ներսէս, դեկտեմբերի 13-ին, գիշերը, Ռուսաց գործակալութեան միջոցով, Կ. Պոլսից ստացանք հետեւեալ հեռագիրը. «Չէլժիւնում ասպատակւած հայերի դիրքերը պաշարել են 10 բաւառիօն թիւրքեր: Երկու բաւառիօններով Անձնատուր լինելու համար հայերի առաջարկած պայմանները մերժված են: Ապստամբութեանը 15 մարդիկ, որոնք եկել էին բանակցութիւնների համար, բռնված են և թողված որպէս պատանդ: Մնացածներին յետ ուղարկեցին՝ պահանջելով անպայման անձնատուր լինել:»

Ներսէսը ինքն, ամսիս 11-ին, երկրագործութեան միջոցով իրաւորի դիւանատանը կայացաւ ձկնաբուծական ընկերութեան նիստից: Ֆ. Կովրայիսին, որը քաջ ուսումնասիրել է Այդր-կովկասի բնոյշային լճերը, կարգաց մի հետաքրքիր դեկուցում այդ լճերի ձկնների մասին և առաջարկեց միջոցներ մեր երկրի ձկնային հարստութիւնը պահպանելու և զարգացնելու համար: Նա գտել է մեր լճերում բոլորովին նոր, գիտութեան մէջ մինչև այժմ անյայտ, ձկնի տեսակներ:

Ներսէս, դեկտեմբերի 13-ին, թիֆլիսի նահանգապետ իշխան Դերվաշիձէ ճանապարհ ընկաւ Պետերբուրգ:

Յօդուտ օգնութեան կարօտ տիկին Եսթեր Ֆիցջերալդի վերջին երկու ամսվայ ընթացքում ստացանք. 1) Պետերբուրգից, Հմայեակ Նաղաբեանի միջոցով, 48 ռուբլի: 2) Հին-Նախիջևանից, Արսէն վարդապետից, 25 ռուբլի: 3) Նոր-Նախիջևանից, տիկին Դոդապետ Պալապանեանից, 100 ռուբլի: 4) Օրբադա-րից, տիկին Եւա Ալթմանովնայի միջոցով, մի խումբ հայ տիկիներին հանգանակած, 15 ռուբլի: 5) Եկատերինօղաբից, Պետրոս Մէլքոնեանի միջոցով, մի խումբ հայերից հանգանակած 23 ռուբլի: 6) Ալաւաբադից, Տիգրան Գիւղաւեանի միջոցով, հանգանակած 29 ռուբլի: 20 կօպէկ: 7) Արդահանից, Մկրտիչ Տէր-Միքայէլեանի միջոցով, հանգանակած 31

ռուբլի: Ընդամենը 271 ռուբլի: 20 կօպէկ: Այսօր այդ գումարն էլ ուղարկեցինք տիկին Ե. Ֆիցջերալդին: Դրա հետ միասին յայտարարում ենք, որ այդ հանգանակութիւնը փակված է և այլ եւս այդ նպատակով փող չենք ընդունում:

Առաջիկայ 1896 թւին, ինչպէս յայտնի է, Ռուսաստանում պէտք է տեղի ունենայ մի օրեայ ժողովրդագրութիւն: Այժմ Պետերբուրգում գործում է մի յատուկ յանձնաժողով՝ ընկերակալ այդ մեծ գործի աջող և արագ իրագործութեան խնդիրները: Առաջին նիստում յանձնաժողովը ուսումնասիրել է և յարմար է գտել գործադրութեան համար մի հաշուէ գործիք, որ մի ժամկայ մէջ տպուած է մինչև 1000 տոմս՝ նշանակելով հասակը, պարագմունքը, կրօնը, լեզուն և այլն: Յանձնաժողովը որոշել է գնել 40 գործիք, վճարելով նրանց համար մինչև 200,000 ռուբլի: Ցումները պէտք է բերվին Ամերիկայից, որովհետև ուսուցող թղթագործարանները շատ թանկ գին են նշանակել և կանգնելի է, որ նրանք կարողանան այնպէս գեղեցիկ և լաւ պատրաստել, ինչպէս այդ պահանջում են գործիքները՝ արագ գործողութեան միջոցին:

Բագուի նաւթագործների ժողովի խորհուրդը վճռել է այսուհետև պարբերաբար մասին ամիս հրատարակել նաւթագործութեան մասին վիճակագրական տեղեկագրեր: Մենք ստացել ենք սեպտեմբեր և դեկտեմբեր ամիսների տեղեկագրերը, որոնց մէջ առաջ են բերված զանազան թւեր Բագուի շրջանում ստացած նաւթի քանակութեան, երկաթուղով ուղարկւած նաւթանիւթերի, Բագուի նաւահանգստից արտահանւած նաւթի 1895 թւի առաջին 8 ամիսների նաւթահանութեան և նաւթագործութեան մասին տեղեկութիւններ տալու նպատակով՝ խորհրդի ստատիստիկական բերօն հրատարակել է մի գրքիկ, որտեղ, բացի կովկասեան նաւթագործութիւնից, գետնըլած է մի գեղեցիկ ամենակալ նաւթագործութեան մասին:

Օպերային խումբը ամսիս 12-ին ներկայացրեց Ռուբինյանի «Կէմսոն» օպերան: Այդ երեկոյ շոյուրիսին ունեցան օր. Մարշալ՝ Թամարայի դերում և Կրուգոլով՝ Կէմսոնի դերում: Առաջինը ընծայ ստացաւ մի փոքր ծաղիկներ, իսկ երկրորդը—պսակ: Հասարակութիւնը քիչ կար:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԸ ԵՒ ԴԻՊԼՈՄԱՏԻԱ

Սուլթանի շնորհակալութիւնը «Times» լրագրի Կ. Պոլսի թղթակցիցը հաղորդում է, որ սուլթանը շնորհակալութիւն յայտնեց Ռուսաց դեսպանին այն բանի համար, որ նա, իր սովորով, անցաւ Բերայի փողոցներով անմիջապէս այն սարսափից յետոյ, որ տրեւի էր Բերայի և Ղալաթայի թաղերին:

Փաշան և իր կուրիւր

«Մարշալ Դաբիր-փաշան և հռչակաւոր Չէքի-փաշան»—ասում է «НОВОСТИ» լրագրի Կ. Պոլսի թղթակցիցը,—անդադար կուրում են Էլզրումում և Դաբիր-փաշան արդէն խնդրեց սուլթանից՝ յետ կանչել Չէքի-փաշային:

Չէքի փաշանի հետ բանակցութիւնը

«Daily News» լրագրի թղթակցիցը հեռագրում է Բերլինից, որ թիւրքաց կառավարութիւնը բանակցութիւններ է սկսել Չէքիփաշայի հայ ապստամբների հետ՝ անձնատուր լինելու պայմանները որոշելու համար: Այդ խորհուրդը սուլթանին տուել է Կ. Պոլսի գերմանական դեսպանը, սակայն բանակցութիւնները անաջող են անցել:

Սուլթան և իր օրիւն

Բէյաթի գործակալութիւնը հեռագրում է Կ. Պոլսից, նոյեմբերի 29-ից. «Ներսէս գումարված դեսպանների ժողովը երկար ժամանակ խորհրդակցում էր Անատոլիայի ողբալի վիճակի մասին, ստացված տեղեկութիւնները հաստատում են, որ կոտորածներից առաջացած սովը և աղէտը հայ ազգաբնակչութեան մէջ անհնարաբեր են: Հաշիւից հառած նամակները յայտնում են, որ քրիստոնեաների կոտորածը անխուսա-

փելի է, եթէ մեծ պետութիւնները վաղորօք նրա առաջը չառնեն:»

Թիւրքաց հերքում

Թիւրքաց կառավարութիւնը հետեւեալ պաշտօնական յայտարարութիւնն է հրատարակել Բիթլիսի մասին:

«Բիթլիսի հայերը բողոքած լինելով, թէ վերջին խռովութիւնների ժամանակ իրանց գոյքը յախշտակվել են մուսուլմաններից, կայսերական կառավարութիւնը խիստ քննութիւն նշանակեց, որն ապացուցեց (?) այդ գանգատի կատարեալ կեղծութիւնը և երևան հանեց, թէ հայերը իրանք են իրանց գոյքը յանձնել մահմետական դրացիներին, որոնք արդէն վերադարձրել են (??) իրանց տէրերին:»

Զարմանում ենք, ինչու քննութիւնը չէ ապացուցել, որ հայերը իրանք են կողոպտել իրանց...

Մի ընդհանուր ծրագիր

Բէյաթի գործակալութիւնը հեռագրում է Կ. Պոլսից, նոյեմբերի 27-ից. «Փոքր-Ասիայի խորքերից եկող տեղեկութիւնները հաստատում են, որ հայ գիւղերը շարունակ աւերվում և հրդեհվում են, մահաւանդ վանի վիշապներով, գիւղական ազգաբնակչութեան մէջ տիրող աղէտները անհնարաբեր են: Ժողովուրդի մեծ մասը, քիւրդերի կոտորածից ազատվելու համար, փակվել է սարերը: Թիւրքաց բացարձակութիւնը վերջին անկարգութիւնների վերաբերմամբ թէ գրգռող հայերն են եղել, որոնք իբր թէ յարձակվել են միլիթներին վրա, միանգամայն հերքվում է անկողմնակալ աղբիւրներից, որոնք ապացուցանում են, թէ այդ բոլոր անկարգութիւնների և կոտորածների բուն պատճառը՝ հայ ազգաբնակչութիւնը բնաջինջ անելու համար յղացված ընդհանուր ծրագիրն է: Եստ նշանաւոր իրողութիւնն է, որ կոտորածները և աւերումները տեղի են ունենում գլխաւորապէս այն վեց վիշապներում, որտեղ պէտք է գործադրվեն մեծ պետութիւնների սուլթանից խլած ընթացիկ ծրագրերը:»

Հին երգը

«Daily News» լրագիրը, իբրև ստատիստիկան և չորագործութեան նմուշ, տպագրել է թիւրքաց «Հազիգաթ» լրագրի հետեւեալ յօդուածը.

«Կատարեալ անգործութիւն է տիրում կայսրութեան բոլոր տեղերում: Այդ աղը հետեւեալը պէտք է վերաբերել սուլթանի իմաստութեան, որ գրաւել է ամենքի երախտագրութիւնը այն արագ եղանակի համար, որով նա կարողացաւ վերանշնչել ընդհանուր խաղաղութեան սպառնացող խառնակութիւնները: Եւրօպայում, և մասնաւոր Անգլիայում, չէին հաւատում, որ մի բուռն հայ ազգաբնակչութեան առաջ բերած խառնակութիւնները կարող են մի մեծ հրդեհ բռնկեցնել, սակայն ազդեցութեան իրական նպատակը յայտնի եղաւ և հասարակաց կարծիքը, որ մի ժամանակ նպատակաւոր էր նրանց, նրանց դէմ գործաւ Այդ ինտրիգաները, իրանց զարկել վարձուքի համար, կայսերական կառավարութիւնից զեռչեն պատժված օրէնքի ամբողջ խառնակութեամբ, և վեհապետի մեծանոգութիւնը զգլի նրանց միանգամայն անօրինակ է:»

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻՅԻՅ

Մօսկ, հոկտեմբերի 17/29-ին

(հաղուածք մի մասնաւոր նամակից)

Մեծ դժուարութեամբ էր, որ կարող եղանք Սասունի խեղճ ժողովուրդը գործի դնել, որ իրենց աւերեալ տուններն չինէն: Բայց հիմա վերաշինութեան գործն լաւ յառաջ կերթայ—տուններու կէտէն աւելի արդէն գրեթէ աւարտած ըլլալով: Իրենց գիւղերն այցելեցի վերջերս (երկրորդ անգամ ըլլալով) և անցեալ շաբաթ երկու վերադարձայ: Անշուշտ վատեցունելու բան չատ կայ, սակայն կը ջանանք զիրենք կարելի եղածին չափ սովորել և ոգևորել:

Վ. ի եղբայրը (Պատուկը) մեզ լաւ աջակցած է Մոսկ, —հաշիւներու և այլ հոգսերի մէջ մեզ միշտ օգնելով: Մի քանի օր առաջ տուն գնաց և կրնայ ըլլալ, որ անիկ ալ Պիթլիս երթայ, մի քանի ամսուան համար, ուր հրաւիրուած է ամենադի բողոքական եկեղեցիի հովութեան պաշտօնն վարելու:

Եստ չնորհակալ եմ, որ մեր այս մարդասիրական գործը կը գնահատվի: Որչափ որ ալ ծանր

ըլլայ մեր այս անձնութեան ձեռնարկն, Եւրօպայէն և այստեղէն մեզ տրուած օգնութիւնն մասամբ կը հեշտացնէ գործն:

Յուսալով որ տուած տեղեկութիւններս գոհացուցիչ են, և մաղթելով որ հայ ազգն շուտով ազատի իր տառապանքներէն, կը մնամ՝

Գանձ. Հայ. Խն. Յանձնաժողովի՝

K. M. Cole

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՎԱՍՏԱՆԻՅ

Թաւրիզ, դեկտեմբերի 3-ին

Թիւրքաց կառավարութիւնը մի նոր միջոցի եւ զիմեց, նա ազդեց մեր քաղաքում հրատարակվող «Նասր» թերթի խմբագրութեան վրա: Այդ թերթին իր անցած համարում այն միտքն է յայտնում, որ իբր թէ Թիւրքիայում կոտորածի պատճառ հայերն են և ոչ՝ տաճիկները, թէ հայերը յարձակվել են «մուսուլմանների» վրա (պարսիկները նրանց երեք մուսուլման չեն անուանել) հէնց այն ժամանակ, երբ նրանք իրանց նամազն են կատարելու եղել: Այդ մասին դիմումն է եղել ուր հարկն է:

Երկու խօսք էլ դպրոցների մասին. Թաւրիզում այժմ դպրոցական անիւսանութիւն է տիրում: Բերդաթաղի հոգաբարձութիւնը հրաժարվել է իր պաշտօնից, ինչ է պատճառը, չը գիտենք: Նոյնպէս չը գիտենք, թէ ինչու փոխանորդը չէ ուղում նոր ընտրութիւն նշանակել: Մեր կարծիքով, կարելոյն չափ չուտ պիտի նոր ընտրութիւն կայացնել. նոյնպէս պիտի վարվել և Լիւաւայի դպրոցի վերաբերութեամբ, որովհետև այդտեղի հոգաբարձուներն էլ չեն ուղում իրանց պաշտօնում մնալ: Մուտքը 30 թուման:

Այս տարի Լիւաւայի դպրոցին կից բացվել է մանկական գրադարան, որի օգտին երէկ երեկոյ նոյն դպրոցի ուսուցիչները մի ներկայացում տուին: Սիրողները սպասածից աւելի լաւ էին: Դժուարեալութեան արժանի է օր. Պապեանը, որ չէ զանաւոր, այս էլ երրորդ անգամ իր ուժերի չափ նպաստել գործին: Մասնակցում էր և դեռասան Աղայեանը:

Արտաւազը

ԻՍԱՌԵՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսի հրապարակներէց մէկի վրա, Այա Սօֆիայի միջկիթի մօտ գտնուում է հռչակաւոր չինարի ծառը, որի մասին մի ամբողջ լեգենդա կայ:

Կ. Պոլսի նուաճող Մահմադ II-ի և ենիչերիների տիրապետութեան ժամանակ, այդ չինարին կախաղանի տեղ էր ծառայում և հաղթաւոր մարդկային կենսանքեր իրանց վերջին շունչը փչել են այդ հոկայ-ծառի ճիւղերի վրա: Այդ չինարին կատարեալապէս գուրկ էր կանաչից և միայն մի քանի տերեւեր ծառի արմատի վրա ցուց էին տալիս, որ ծառը զեռ ապրում է: Յոյների մէջ մի աւանդութիւն կայ, որը վերջը անցել է և թիւրքերին, որ այն տարին, երբ այդ չինարի ծառը ամբողջապէս կը կանաչի, թիւրքաց տիրապետութեանը վերջ կը դրվի— և բիւզանդական կայսրների հին մայրաքաղաքը կրկին կանցնի քրիստոնեաների ձեռքը: Զորս տարի առաջ, թիւրքերը երկիւղով հետեւում էին, որ չինարի ծառի վրա նոր կանաչ է երևում և հէնց այն հակապահ ճիւղերի վրա, որոնք չորացած էին համարվում: Այդ կանաչը աւելի և աւելի տարածվում է, և այս տարի չինարի ծառի համարեա կեսը ծածկվեց թաւով կանաչով: Այդ առասպելական ծառը այցելում են մեծ հեռաքրքրութեամբ:

Յոյները,—ասում է, «Закаси. Обозр.», լրագրի թղթակցիցը,—անցնելով ծառի մօտից, իրենաբաւական կերպով նայում են նրա կանաչի վրա,—իսկ թիւրքերը անցնում են մտահոգ և տխուր:

ՄՇԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 դեկտեմբերի: Յիմանաների միջխտրութիւնը հրատարակեց հետեւեալ հայտը: Դաւորութիւնը. «Հոգ տանելով ոսկէ դրամի չըջանաւորութեան դարգացման վրա, ֆինանսների միջխտրութիւնը չէր կարող չը նկատել, որ ոսկէ դրամի գինը, որը համակերպված է մուսուլմանային կուրսերին 1894—1995 թւերի ընթացքում, անյարմար է հայիւնների համար, օրինակ, երբ սլոնիմայերեալը արժէ 7 ռ. 40 կ. մէկ ռուբլին ոսկով արժէ 1 ռ. 40 կ. թղթադրամին, որի պատճառով դրամները ոսկուց թղթադրամի վերածելը և հակառակը շատ դժուար է առօրեայ կենցաղավարութեան մէջ: Այդ մասին յաճախ յայտարարութիւններ էր տրվում և հասարակութեան կողմից: Այն ինչ ոսկէ դրամի գին շատ

